

**Տեղեկանք մաքսանենգության և մաքսային կանոնների խախտման վերաբերյալ նախապատրաստված նյութերով կայացված որոշումների մասին /01.01-14.04.2009թ./**

**«Էյ Դաբլյու Այ» ՍՊԸ փոխտնօրեն Վոլոդյա Ռաֆայելի Այվազյանի վերաբերյալ նյութերը /14.04.2009թ./**

Նյութերով պարզվել է, որ «Էյ Դաբլյու Այ» ՍՊԸ փոխտնօրեն Վոլոդյա Այվազյանն ընկերության անվամբ ՀՀ փաստացի ներմուծված, 7.410.113 դրամ ընդհանուր մաքսային արժեքով 750 հատ ժամացույցի մեխանիզմներն ու գոտիները սխալ է հայտարարագրել, իսկ ապրանքի որոշ մասն էլ չի հայտարարագրել, այսինքն՝ թույլ է տվել ՀՀ մաքսային օրենսգրքի 203 հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտում, ինչը հիմնավորվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ կազմված արձանագրությամբ, 14.01.2009թ. թիվ C314 և թիվ C424 ԲՄՀ-ներով, փորձագետի եզրակացությամբ և Վ.Այվազյանի բացատրությամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ մաքսային օրենսգրքի 203, 206, և 221 հոդվածներով, որոշվել է «Էյ Դաբլյու Այ» ՍՊԸ փոխտնօրեն Վոլոդյա Ռաֆայելի Այվազյանին ճանաչել զանցառու ՀՀ մաքսային օրենսգրքի 203 հոդվածով և տուգանել ոչ իրենց անվանմամբ հայտարարագրված և չհայտարարագրված ապրանքի մաքսային արժեքի չափով՝ 7.410.113 դրամ:

**«Ծովային հրաշքներ» ՍՊԸ տնօրեն Լևոն Դավոյանի վերաբերյալ նյութերը /25.02.2009թ./**

Նյութերով պարզվել է, որ «Ծովային հրաշքներ» ՍՊԸ տնօրեն Լևոն Դավոյանը և լիազոր ներկայացուցիչ Հարություն Կարապետյանը մաքսային և այլ փաստաթղթերը՝ այդ թվում «Նիվել ԼՏԴ» ՍՊԸ անվամբ կազմված հաշիվ-ապրանքագիրը խաբեությամբ օգտագործելու միջոցով ՀՀ տարածք են ներմուծել 8.925.600 դրամ մաքսային արժեքով 812 կգ նետտո և 1.115 կգ բրուտտո քաշով 10 կգ սառեցված ծովային սունկ, 374 կգ սառեցված կակղամորթ, 36 կգ կալմարի սառեցված ֆիլե, 3 կգ թռչող ձկան խավիար, 388,92 կգ սողմոնի խավիար, ինչը հիմնավորվում է հետբացթողումային հսկողության արդյունքում մաքսային կանոնների խախտման վերաբերյալ կազմված արձանագրությամբ, մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման համար մաքսային մարմին ներկայացված հաշիվ ապրանքագրով, ԲՄՀ-ով, արտահանման բեռնամաքսային հայտարարագրով, պայմանագրով, ՌԴ մաքսային մարմնից ստացված տեղեկություններով, «Հայէկոնոմբանկ»-ի վճարման հանձնարարագրերով, Լ.Հակոբյանի և Հ.Կարապետյանի

բացատրություններով:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ Լևոն Դավոյանի և Հարություն Կարապետյանի արարքում առկա են ՀՀ քր.օր-ի 215 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ, որով նախաքննություն կատարելը պարտադիր է, ուստի, ղեկավարվելով ՀՀ քր.դատ.օր.-ի 181 և 190 հոդվածներով, որոշվել է՝ «Ծովային հրաշքներ» ՍՊԸ տնօրեն Լևոն Դավոյանի և լիազոր ներկայացուցիչ Հարություն Կարապետյանի վերաբերյալ նյութերն ուղարկել ըստ ենթակայության ՊԵԿ քննչական վարչություն՝ հետագա ընթացքը լուծելու համար:

**«Տոնուս-Լես» ՍՊԸ տնօրեն Լևոն Հակոբյանի վերաբերյալ նյութերը / 24.02.2009թ./**

Նյութերով պարզվել է, որ «Տոնուս-Լես» ՍՊԸ տնօրեն Լևոն Հակոբյանը մաքսային և այլ փաստաթղթերը՝ այդ թվում ԱՄՆ-ում գրանցված «Hanover Commercial Enterprises LLC» կազմակերպության անվամբ կազմված հաշիվ-ապրանքագիրը խաբեությամբ օգտագործելու միջոցով ՀՀ տարածք է ներմուծել 14.002.309 դրամ մաքսային արժեքով 277 կգ բրուտտո և 254,36 կգ նետտո քաշով դեղեր: Դա հիմնավորվում է հետբացթողումային հսկողության արդյունքում մաքսային կանոնների խախտման վերաբերյալ կազմված արձանագրությամբ, մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման համար մաքսային մարմին ներկայացված հաշիվ-ապրանքագրով, ավիաբեռնագրով, ծագման հավաստագրով, ԲՄՀ-ով, Բելառուսի մաքսային կոմիտեի կողմից տրամադրված տեղեկություններով, 23.07.2004թ. թիվ 47 պայմանագրով, 25.10.2005թ. թիվ 1 լրացուցիչ համաձայնությունով և Լ.Հակոբյանի բացատրությամբ:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ Լևոն Հակոբյանի արարքում առկա են ՀՀ քր.օր.-ի 215 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ, որով նախաքննություն կատարելը պարտադիր է, ուստի, ղեկավարվելով ՀՀ քր.դատ.օր.-ի 181 և 190 հոդվածներով, որոշվել է՝ «Տոնուս-Լես» ՍՊԸ տնօրեն Լևոն Հակոբյանի կողմից մաքսային և այլ փաստաթղթերը՝ այդ թվում «Hanover Commercial Enterprises LLC» կազմակերպության անվամբ կազմված հաշիվ-ապրանքագիրը խաբեությամբ օգտագործելու միջոցով նշված ապրանքը ՀՀ տարածք ներմուծելու վերաբերյալ նյութերն ուղարկել ըստ ենթակայության ՊԵԿ քննչական վարչություն՝ հետագա ընթացքը լուծելու համար:

**«Արնդանե» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ Տիգրան Վազգենի Թոռունյանի վերաբերյալ նյութերը /23.02.2009թ./**

Նյութերով պարզվել է, որ «Արնդանե» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ Տիգրան Վազգենի Թոռունյանը ընկերության անվամբ Բագրատաշենի մաքսակետով ՀՀ

տարածք ներմուծված և Արարատյան տարածաշրջանային մաքսատանը հայտարարագրված ապրանքներից բեղիակյան արտադրության 1000կգ քաշով «Choline chloride», 1000կգ «Babipops», 500կգ «Babito» և ֆրանսիական արտադրության 500կգ «L-Threonine» տեսակի կերային հավելումները հայտարարագրել է ծագման երկրի վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկություններով՝ որպես նիդեռլանդական, ինչը հիմնավորվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ կազմված արձանագրությամբ, ԲՄՀ-ով և Տ.Թոռունյանի բացատրությամբ: Նկատի ունենալով, որ «Արնդանե» ՄՊԸ անվամբ ՀՀ տարածք տեղափոխված ապրանքն ընկերության լիազոր ներկայացուցիչը չի թաքցրել մաքսային հսկողությունից, հայտարարագրման ժամանակ մաքսային և այլ փաստաթղթեր խաբեությամբ չի օգտագործել, այլ դրանք հայտարարագրել է ծագման երկրի վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկություններով, այսինքն՝ Տ.Թոռունյանի արարքում բացակայում են ՀՀ քր.օր.-ի 215 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ, սակայն առկա է ՀՀ մաքսային օրենսգրքի 203 հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտում, որի համար ենթակա է վարչական պատասխանատվության, ուստի ղեկավարվելով ՀՀ քր.դատ.օր.-ի 35 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 185 հոդվածով, որոշվել է՝ Տիգրան Վազգենի Թոռունյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժել՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Մեկ այլ որոշմամբ Տ.Թոռունյանը ճանաչվել է զանցառու՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 203 հոդվածով և տուգանվել ծագման երկրի վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրված ապրանքի մաքսային արժեքի չափով՝ 1.560.207 դրամ:

### **ՎՀ քաղաքացի Սեյրան Սարգսի Գրիգորյանի վերաբերյալ նյութերը / 23.02.2009թ./**

Նյութերով պարզվել է, որ ՎՀ քաղաքացի Սեյրան Սարգսի Գրիգորյանի կողմից, մաքսային հսկողությունից թաքցնելով, ՀՀ տարածք է տեղափոխվել 216.000 դրամ արժողության 48 հատ՝ յուրաքանչյուրը 113 գրամ քաշով, ապակե տարաներով սև ձկնկիթ, 47 հատ՝ յուրաքանչյուրը 113 գրամ քաշով, ապակե տարաներով կարմիր ձկնկիթ և 9 արկղ՝ յուրաքանչյուրը 5 կիլոգրամ՝ ընդհանուր 45 կիլոգրամ քաշով հալվա: Դա հիմնավորվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ կազմված արձանագրությամբ, փորձագետի եզրակացությամբ և Ս.Գրիգորյանի բացատրությամբ: Նշված ապրանքի շուկայական արժեքը չի գերազանցում «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափը, այսինքն՝ նրա արարքում բացակայում են ՀՀ քր.օր.-ի 215 հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներ, սակայն առկա է ՀՀ մաքսային օրենսգրքի

201 հողվածով նախատեսված մաքսային կանոնների խախտում, որի համար ենթակա է վարչական պատասխանատվության:  
Հետևաբար, ղեկավարվելով ՀՀ քր.դատ.օր-ի 35 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 185 հոդվածով, որոշվել է Սեյրան Գրիգորյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժել՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Փորձագետի եզրակացության հիման վրա, համաձայն ՀՀ Մաքսային օրենսգրքի 91 հոդվածի, հաշվարկվել է ապրանքի մաքսային արժեքը, որը կազմում է 110.989 դրամ:  
Ղեկավարվելով ՀՀ Մաքսային օրենսգրքի 201, 206 և 221 հոդվածներով, որոշվել է Սեյրան Գրիգորյանին ճանաչել զանցառու՝ ՀՀ Մաքսային օրենսգրքի 201 հոդվածով և նրան տուգանել մաքսային հսկողությունից թաքցնելով ՀՀ տարածք տեղափոխված ապրանքի մաքսային արժեքի չափով՝ 110.989 դրամ:

### **Հակոբ Հակոբիկյանի վերաբերյալ նյութեր /20.02.2009թ./**

Նյութերով պարզվել է, որ 05.01.2009թ.-ին, Հակոբ Հակոբիկյանին պատկանող “Ռենո Կլիո” մակնիշի, 16 ՍԼ 419 պետհամարանիշի ավտոմեքենայում հայտնաբերվել է ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա, առանց ՀՀ ակցիզային դրոշմանիշերի ՀՀ տարածք տեղափոխված 261.920 դրամ արժողության, 1.276 տուփ “Папиросы курортные” տեսակի ծխախոտ, ինչը հիմնավորվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ կազմված արձանագրությամբ, փորձագետի եզրակացությամբ և բացատրություններով: Տվյալ տեսակի ծխախոտի շուկայական արժեքը գերազանցում է “Նվազագույն ամսական աշխատավարձի մասին” ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափը, այսինքն՝ առկա են ՀՀ Քր.օր-ի 215 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ: Ղեկավարվելով ՀՀ Քր.դատ.օր-ի 181 և 190 հոդվածներով, որոշվել է փաստի վերաբերյալ նյութերն ուղարկել ըստ ենթակայության ՊԵԿ քննչական վարչություն՝ հետագա ընթացքը լուծելու համար: Որոշման մեկ օրինակն ուղարկվել է ՀՀ Գլխավոր դատախազություն:

### **Արմեն Վասիլի Ֆրանգուլյանի վերաբերյալ նյութերը /17.02.2009թ./**

Նյութերով պարզվել է, որ Արմեն Վասիլի Ֆրանգուլյանը, թաքցնելով մաքսային հսկողությունից, ՀՀ տարածք է տեղափոխել 182.400 դրամ արժողության 48 հատ՝ յուրաքանչյուրը 113 գրամ քաշով, ապակե տարաներով սև ձկնկիթ, մետաղյա տարաներով պահածոյացված 144 հատ՝ յուրաքանչյուրը 215 գրամ քաշով «Սկումբրիա» տեսակի և 96 հատ՝ յուրաքանչյուրը 215 գրամ քաշով «Սարդինի» տեսակի ձուկ: Դա հիմնավորվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ կազմված արձանագրությամբ, փորձագետի եզրակացությամբ և Ա.Ֆրանգուլյանի բացատրությամբ: Նկատի ունենալով, որ

Ա.Ֆրանգուլյանի կողմից մաքսային հսկողությունից թաքցնելով ՀՀ տարածք տեղափոխված ապրանքի շուկայական արժեքը չի գերազանցում «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափը, այսինքն՝ նրա արարքում բացակայում են ՀՀ քր.օր-ի 215 հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներ, սակայն առկա է ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտում, որի համար ենթակա է վարչական պատասխանատվության: Հետևաբար, ղեկավարվելով ՀՀ քր.դատ.օր-ի 35 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 185 հոդվածով, որոշվել է Ա.Ֆրանգուլյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժել՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Մեկ այլ որոշմամբ Ա.Ֆրանգուլյանը ճանաչվել է զանցառու՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 201 հոդվածով և տուգանվել՝ մաքսային հսկողությունից թաքցնելով ՀՀ տարածք տեղափոխված ապրանքի մաքսային արժեքի չափով՝ 93. 724 դրամ:

**«Բյուրակն» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ Էլեոնորա Վլադիմիրի Մուսայելյանի վերաբերյալ նյութերը /17.02.2009թ./**

Նյութերով պարզվել է, որ «Բյուրակն» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ Էլեոնորա Վլադիմիրի Մուսայելյանն ընկերության անվամբ ավիաբեռնագրով ՀՀ տարածք ներմուծված և «Զվարթնոց» մաքսատանը հայտարարագրված ապրանքներից 741.700 դրամ արժողության 6 տարա՝ 109.08 կգ նետտո քաշով մեքսիկական արտադրության տպիչի թանաքը հայտարարագրել է ծագման երկրի վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկություններով՝ որպես չինական. դա հիմնավորվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ կազմված արձանագրությամբ, ԲՄՀ-ով, ապրանքների զննման վերաբերյալ կազմված արձանագրությամբ, փորձագետի եզրակացությամբ և Է. Մուսայելյանի բացատրությամբ:

Նկատի ունենալով, որ նշված ապրանքը չի թաքցվել մաքսային հսկողությունից, հայտարարագրման ժամանակ մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ չի օգտագործել, այլ դրանք հայտարարագրել է ծագման երկրի վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկություններով, այսինքն՝ Է.Մուսայելյանի արարքում բացակայում են ՀՀ քր.օր.-ի 215 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ, սակայն առկա է ՀՀ մաքսային օրենսգրքի 203 հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտում, որի համար ենթակա է վարչական պատասխանատվության, ուստի, ղեկավարվելով ՀՀ քր.դատ.օր.-ի 35 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 185 հոդվածով, որոշվել է Է. Մուսայելյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժել՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Մեկ այլ որոշմամբ, ղեկավարվելով ՀՀ մաքսային օրենսգրքի 203, 206 և 221 հոդվածներով, Է. Մուսայելյանը ճանաչվել է զանցառու ՀՀ մաքսային օրենսգրքի 203 հոդվածով և տուգանվել՝ ծագման երկրի վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրված 109.08 կգ նետոտ քաշով տպիչի թանաքի մաքսային արժեքի չափով՝ 543.889 դրամ:

**«Հովնանյան Ինտերնեյշնլ» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ Յուրի Վիլհեմի Ղուկասյանի վերաբերյալ նյութերը /16.02.2009թ./**

Նյութերով պարզվել է, որ «Հովնանյան Ինտերնեյշնլ» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ Յուրի Վիլհեմի Ղուկասյանի կողմից ՀՀ տարածք ներմուծված և Արարատյան տարածաշրջանային մաքսատանը հայտարարագրված ապրանքներից, փաստացի ներմուծված 3.080.000 դրամ արժողության թվով 14 հատ «A.O. Smith Water Producty GCV 50-200» մակնիշի գազային ջրատաքացուցիչները հայտարարագրվել են մակնիշի վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկություններով՝ որպես «Rheem 25V-6 50x 3,8լ» մակնիշի: Դա հիմնավորվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ կազմված արձանագրությամբ, ԲՄՀ-ով, փորձագետի եզրակացությամբ և Յ.Ղուկասյանի բացատրությամբ:

«Հովնանյան Ինտերնեյշնլ» ՍՊԸ անվամբ ՀՀ տարածք տեղափոխված նշված ապրանքը ընկերության լիազոր ներկայացուցիչը չի թաքցրել մաքսային հսկողությունից, հայտարարագրման ժամանակ մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ չի օգտագործել, այլ դրանք հայտարարագրել է մակնիշի վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկություններով, այսինքն՝ Յ.Ղուկասյանի արարքում բացակայում են ՀՀ քր.օր.-ի 215 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ, սակայն առկա է ՀՀ մաքսային օրենսգրքի 203 հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտում, որի համար ենթակա է վարչական պատասխանատվության: Հետևաբար, ղեկավարվելով ՀՀ քր.դատ.օր.-ի 35 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 185 հոդվածով, որոշվել է՝ Յ.Ղուկասյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժել՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Մեկ այլ որոշմամբ Յ.Ղուկասյանը ճանաչվել է զանցառու ՀՀ մաքսային օրենսգրքի 203 հոդվածով և տուգանվել՝ մակնիշի վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրված ապրանքի մաքսային արժեքի չափով՝ 2.258.564 դրամ:

**Վոլոդյա Ամոյի Մստոյանի վերաբերյալ նյութերը /13.02.2009թ./**

Նյութերով պարզվել է, որ ՀՀ քաղաքացի Վոլոդյա Մստոյանը 2008թ.-ի հոկտեմբերի 16-ին Բագրատաշենի մաքսային կետով «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ՀՀ տարածք ներմուծված և մաքսային

հսկողության ներքո գտնվող «Ֆուլգվագեն Վենտո» մակնիշի, TEM 881 պետհամարանիշի ավտոմեքենան առանց մաքսային մարմնի թույլտվության հանձնել է այլ անձի, այսինքն՝ թույլ է տվել ՀՀ Մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտում, ինչը հիմնավորվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ կազմված արձանագրությամբ, Վ.Մստոյանի 19.01.2009թ. դիմումով, բեռնամաքսային հայտարարագրերով, Գուգարքի տարածաշրջանային մաքսատան գրությամբ, Վոլոդյա և Փաշա Մստոյանների բացատրություններով: Նկատի ունենալով, որ Վ.Մստոյանի արարքում առկա է ՀՀ Մաքսային օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտում, հետևաբար, ղեկավարվելով ՀՀ մաքսային օրենսգրքի 198, 206, և 221 հոդվածներով, որոշվել է Վ.Մստոյանին ճանաչել զանցառու՝ ՀՀ Մաքսային օրենսգրքի 198 հոդվածով և տուգանել՝ առանց մաքսային մարմնի թույլտվության այլ անձի հանձնած, մաքսային հսկողության ներքո գտնվող նշված մակնիշի ավտոմեքենայի մաքսային արժեքի 50 տոկոսի չափով՝ 537.442 դրամ:

#### **Կարեն Ներսեսի Վարդանյանի վերաբերյալ նյութերը /11.02.2009թ./**

Նյութերով պարզվել է, որ Կարեն Ներսեսի Վարդանյանը, թաքցնելով մաքսային հսկողությունից, ՀՀ տարածք է տեղափոխել 2.830.000 արժողության 54 հատ բջջային հեռախոս, ինչը հիմնավորվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ կազմված արձանագրությամբ, փորձագետի եզրակացությամբ, Կարեն Ներսեսի Վարդանյանի և Դավիթ Լևոնի Չոբանյանի բացատրություններով:

Նկատի ունենալով, որ Կ.Վարդանյանի արարքում առկա է ՀՀ քր.օր.-ի 215 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ, որով նախաքննություն կատարելը պարտադիր է, ուստի, ղեկավարվելով ՀՀ քր.դատ.օր.-ի 181 և 190 հոդվածներով, որոշվել է՝ Կարեն Ներսեսի Վարդանյանի կողմից նշված ապրանքը մաքսային հսկողությունից թաքցնելով ՀՀ տարածք տեղափոխելու վերաբերյալ նյութերն ուղարկել ըստ ենթակայության ՊԵԿ քննչական վարչություն՝ հետագա ընթացքը լուծելու համար:

#### **Արթուր Սանասարյանի լիազոր ներկայացուցիչ Արմեն Մաթոսյանի վերաբերյալ նյութերը /09.02.2009թ./**

Նյութերով պարզվել է, որ Արմեն Մաթոսյանը, թաքցնելով մաքսային հսկողությունից, ՀՀ տարածք է տեղափոխել 1.334.400 դրամ արժողության 760 կգ մանդարին, 280 կգ լիմոն, 238 կգ կիվի և 380 կգ մարինացված «խամսա» տեսակի ձուկ: Դա հիմնավորվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ կազմված արձանագրությամբ, փորձագետի եզրակացությամբ,

ԲՄՀ-ով, ծագման երկրի հավաստագրով, հաշիվ-ապրանքագրով, ներմուծման բուսասանիտարական հավաստագրով, Ա.Մաթոսյանի, Գ.Լազվիլավայի, Է.Լազվիլավայի և Վ.Ղուրդուլիայի բացատրություններով: Նկատի ունենալով, որ Ա.Մաթոսյանի արարքում առկա են ՀՀ քր.օր-ի 215 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ, որով նախաքննություն կատարելը պարտադիր է, ուստի, ղեկավարվելով ՀՀ քր.դատ.օր-ի 181 և 190 հոդվածներով, որոշվել է՝ Ա.Մաթոսյանի վերաբերյալ նյութերն ուղարկել ըստ ենթակայության ՊԵԿ քննչական վարչություն՝ հետագա ընթացքը լուծելու համար:

**“Օձաձոր” ՍՊԸ-ի տնօրեն Վիգեն Լենդրիկի Հայրապետյանի և լիազոր ներկայացուցիչ Սահակ Գառնիկի Բարսեղյանի վերաբերյալ նյութեր /03.02.2009թ./**

Նյութերով պարզվել է, որ “Օձաձոր” ՍՊԸ-ի անվամբ Դուբայից Մեդրիի մաքսակետով ՀՀ տարածք ներմուծված բեռից 240 քմ վարագույր ընկերության լիազոր ներկայացուցիչը չի հայտարարագրել, ինչը հիմնավորվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ կազմված արձանագրությամբ, բեռնամաքսային հայտարարագրով, փորձագետի եզրակացությամբ և տրված բացատրություններով:

Նկատի ունենալով, որ ներմուծելուց 240 քմ վարագույրը չի թաքցվել մաքսային հսկողությունից, հայտարարագրման ժամանակ մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ չեն օգտագործվել, այլ չեն հայտարարագրվել, հետևաբար արարքում բացակայում են ՀՀ Քր.օր-ի 215 հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները, սակայն առկա է ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտում: Դրա համար որոշվել է Սահակ Գառնիկի Բարսեղյանին ենթարկել վարչական պատասխանատվության:

Ղեկավարվելով ՀՀ քր.դատ.օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 185-րդ հոդվածով, որոշվել է Սահակ Գառնիկի Բարսեղյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժել՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառով:

Մեկ այլ որոշմամբ, ղեկավարվելով ՎԻՎ ՀՀ օր.-ի 247-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ մաքսային օրենսգրքի 203, 206 և 221 հոդվածներով, Վիգեն Լենդրիկի Հայրապետյանի նկատմամբ վարչական գործի վարույթը կարճվել է՝ իրավախախտման կազմի բացակայության պատճառով: Սահակ Գառնիկի Բարսեղյանը ճանաչվել է զանցառու՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 203 հոդվածով և տուգանվել է՝ չհայտարարագրված ապրանքի մաքսային արժեքի չափով՝ 227.374 դրամ:



**“Վ և Ն Մուրադյաններ” ՍՊԸ տնօրեն Վահագն Սողոմոնի Մուրադյանի և լիազոր ներկայացուցիչ Արմեն Խալտուրի Գրիգորյանի վերաբերյալ նյութեր /02.02.2009թ./**

Նյութերով պարզվել է, որ “Վ և Ն Մուրադյաններ” ՍՊԸ-ի անվամբ Դուբայից Մեդրիի մաքսակետով ներմուծված բեռից ավտոմեքենայի օդի պոլիմերային 100 հատ և մալուխների պոլիմերային 50 հատ թուրքական արտադրության խողովակների ծագման երկիրն ընկերության տնօրեն Վահագն Մուրադյանը հայտարարագրել է ոչ ճշգրիտ տեղեկություններով: Դա հիմնավորվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ կազմված արձանագրությամբ, բեռնամաքսային հայտարարագրով, փորձագետի եզրակացությամբ և տրված բացատրություններով:

Նկատի ունենալով, որ նշված ապրանքը ներմուծելիս չի թաքցվել մաքսային հսկողությունից, հայտարարագրման ժամանակ մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ չեն օգտագործվել, այլ սխալ են հայտարարագրվել, հետևաբար արարքում բացակայում են ՀՀ Քր.օր-ի 215 հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները, սակայն առկա է ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների

խախտում:

Ղեկավարվելով ՀՀ քր.դատ.օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 185-րդ հոդվածով, որոշվել է Վահագն Մուրադյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժել՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառով:

Մեկ այլ որոշմամբ, ղեկավարվելով ՎԻՎ ՀՀ օր.-ի 247-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ մաքսային օրենսգրքի 203, 206 և 221 հոդվածներով, Արմեն Խալտուրի Գրիգորյանի նկատմամբ վարչական գործի վարույթը կարճվել է՝ իրավախախտման կազմի բացակայության պատճառով: Վահագն Մուրադյանը ճանաչվել է զանցառու՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 203 հոդվածով և տուգանվել է ծագման երկրի վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրված ավտոմեքենայի օդի պոլիմերային 100 հատ և մալուխների պոլիմերային 50 հատ թուրքական արտադրության խողովակների մաքսային արժեքի չափով՝ 385.380 դրամ:

**Թուրքիայի քաղաքացի Գոկմեն Կիբարի վերաբերյալ նյութերը / 30.01.2009թ./**

Նյութերով պարզվել է, որ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդ, Թուրքիայի քաղաքացի Գոկմեն Կիբարը մաքսային հսկողություն իրականացնելու համար մաքսային մարմիններին չի ներկայացրել իր կողմից տեղափոխվող ապրանքների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերն, այսինքն՝ թույլ է տվել ՀՀ Մաքսային օրենսգրքի 194 հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտում, ինչը հիմնավորվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ կազմված արձանագրությամբ և Հովհաննես Ավետիքի

Չամսարյանի

բացատրությամբ:

Ղեկավարվելով ՀՀ Մաքսային օրենսգրքի 194, 206 և 221 հոդվածներով, որոշվել է Գոկմեն Կիբարին ճանաչել զանցառու ՀՀ Մաքսային օրենսգրքի 194 հոդվածով և տուգանել 50 հազար դրամ:

**“Երևան Ջուր” ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ Սամվել Արամի Ավետիսյանի վերաբերյալ նյութեր /30.01.2009թ./**

Նյութերով պարզվել է, որ “Երևան Ջուր” ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ Սամվել Արամի Ավետիսյանը, ընկերության անվամբ ՀՀ տարածք է ներմուծել “Ժամանակավոր ներմուծում” մաքսային ռեժիմով հայտարարագրված 13 հատ մետաղյա տակառներ՝ 7.290 կգ քաշով և 4.276.764 դրամ մաքսային արժեքով: “Վերաարտահանում” մաքսային ռեժիմով արտահանելու ժամանակ սխալ է հայտարարագրել մաքսային արժեքը՝ 587.086 դրամ, այսինքն՝ թույլ է տվել ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտում: Դա հիմնավորվում է կազմված համապատասխան արձանագրությամբ, բեռնամաքսային հայտարարագրերով և Ս.Ավետիսյանի բացատրությամբ:

Որոշվել է Սամվել Արամի Ավետիսյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժել՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառով /արարքում բացակայում են ՀՀ Քր.օր-ի 215 հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները/: Միաժամանակ նա ճանաչվել է զանցառու՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով և տուգանվել՝ սխալ հայտարարագրված ապրանքի մաքսային արժեքի չափով:

**Վրաստանի քաղաքացի Ռուլանդ Կնյազի Կոբալաձեի վերաբերյալ նյութերը /29.01.2009թ./**

Նյութերով պարզվել է, որ Ռուլանդ Կնյազի Կոբալաձեն, թաքցնելով մաքսային հսկողությունից, ՀՀ տարածք է տեղափոխել 84.200 դրամ արժողության «Blow Glass» տեսակի, 6-009950 համարի 1 հատ գազային ատրճանակ և 14 հատ ձայնային փամփուշտ, ինչը հիմնավորվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ կազմված արձանագրությամբ, փորձագետի եզրակացությամբ և Ռուլանդ Կնյազի Կոբալաձեի բացատրությամբ: Ռուլանդ Կոբալաձեի կողմից մաքսային հսկողությունից թաքցնելով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխված ապրանքը հրազեն և ռազմամթերք չի հանդիսանում և դրա շուկայական արժեքը չի գերազանցում «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափը, այսինքն՝ Ռ.Կոբալաձեի արարքում բացակայում են ՀՀ քր.օր-ի 215 հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներ: Նյութերով ձեռք բերված տվյալների գնահատմամբ պարզվել է, որ առանց համապատասխան

թույլտվության ձեռք բերված գազային ասորճանակը Ռ.Կոբալաձեն մարմնին կամ հազուստի մեջ չի կրել, այսինքն՝ նրա գործողություններում բացակայում է ՀՀ քր.օր.-ի 235 հոդվածի 4 մասով նախատեսված արարքի հանցակազմ, սակայն առկա է ՀՀ մաքսային օրենսգրքի 201 հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտում:  
Հետևաբար, ղեկավարվելով ՀՀ քր.դատ.օր.-ի 35 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 185 հոդվածով, ՀՀ մաքսային օրենսգրքի 201, 206 և 221 հոդվածներով, որոշվել է քրեական գործի հարուցումը մերժել՝ Ռ.Կոբալաձեի արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:  
Կոբալաձեն ճանաչվել է զանցառու ՀՀ Մաքսային օրենսգրքի 201 հոդվածով և տուգանվել մաքսային հսկողությունից թաքցնելով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխված ապրանքի մաքսային արժեքի չափով՝ 61.744 դրամ:

### **Գառնիկ Արայի Ավետիսյանի վերաբերյալ նյութերը / 22.01.2009թ./**

Նյութերով պարզվել է, որ Գառնիկ Ավետիսյանը ՀՀ ներմուծված 10 կգ նետտո քաշով 3 կոմպլեկտ լոգարանի մետաղյա արսետուարների, 11 կգ նետտո քաշով 5 հատ լոգարանի խառնիչային ծորակի, 55 կգ նետտո քաշով 1 հատ լոգարանահիցիկի, 28 կգ նետտո քաշով 8 հատ լոգարանի մետաղյա ցնցուղի քաշերի վերաբերյալ հայտարարագրել է ոչ ճշգրիտ տեղեկություններ, իսկ իտալական արտադրության 5 հատ ցնցուղը հայտարարագրել է որպես չինական, ինչը հիմնավորվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ կազմված արձանագրությամբ, բեռնամաքսային հայտարարագրով, հաշիվ-ապրանքագրով և Գ. Ավետիսյանի բացատրությամբ: Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ Գ.Ավետիսյանի կողմից քաշի և ծազման երկրի վերաբերյալ ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրված ապրանքի մաքսային արժեքը չի գերազանցում «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափը, այսինքն՝ Գառնիկ Ավետիսյանի արարքում բացակայում են ՀՀ քր.օր.-ի 215 հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներ, սակայն առկա է ՀՀ մաքսային օրենսգրքի 203 հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտում, ուստի, ղեկավարվելով ՀՀ քր.դատ.օր.-ի 35 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ մաքսային օրենսգրքի 203, 206, 221 հոդվածներով, որոշվել է Գ. Ավետիսյանի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժել՝ արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:  
Գ.Ավետիսյանը ճանաչվել է զանցառու ՀՀ մաքսային օրենսգրքի 203 հոդվածով և տուգանվել՝ ոչ ճշգրիտ տեղեկություններով հայտարարագրված ապրանքի մաքսային արժեքի չափով՝ 682.966 դրամ:

### **ԻԻՀ քաղաքացի Ղորբան Խալիլի Ջարգանի վերաբերյալ նյութեր / 13.01.2009թ./**

Նյութերով պարզվել է, որ ԻԻՀ քաղաքացի Ղորբան Խալիլի Ջարզանին՝ մաքսային հսկողությունից թաքցնելով, ՀՀ մաքսային սահմանով տեղափոխել է 8,25 գրամ ափիոն տեսակի թմրամիջոց և 62 հաբ «Տրամադոլ 100», 20 հաբ «Տրամադոլ 50», 50 հաբ «Սցետամինապոն կոդեին 300/10», 4 հաբ «Սցենամինապոն կոդեին 20» տեսակի հոգեմետ բաղադրատարրեր պարունակող

դեղորայք:

Ղորբան Խալիլի Ջարզանի արարքում առկա են ՀՀ Քր.օր-ի 215 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ: Ղեկավարվելով ՀՀ Քր.դատ.օր-ի 181 և 190 հոդվածներով, որոշվել է ԻԻՀ քաղաքացի Ղորբան Խալիլի Ջարզանի վերաբերյալ նյութերն ուղարկել ըստ ենթակայության ՊԵԿ ՄԾ քննչական բաժին՝ հետագա ընթացքը լուծելու համար: